



# COVID-19

# Փաստեր պատվաստման մասին



## ՊԱՏՎԱՍՏՈՒՄԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ COVID-Ի ՎԱՏԱԳՈՒՅՆ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը նվազեցնում են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Դրանք նաև նվազեցնում է ձեր՝ երկարատև COVID-19-ով վարակվելու վտանգը:
- COVID-19-ի դեմ Pfizer-ի և Moderna-ի բոլոր պատվաստանյութերն այժմ թարմացված երկվալենտ պատվաստանյութեր են: Դրանք թարմացվել են՝ վարակի ավելի նոր տարբերակներից պաշտպանելու համար:

## ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվճար են**, նույնիսկ եթե դուք չունեք բժշկական ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:



ԱՆՎՃԱՐ

## 6 ԱՄՍԱԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՁ ՊԵՏՔ ԵՍԱՆԱ ԱՌՆՎԱԶՆ ՄԵՎ ԹԱՐՄԱՑՎԱԾ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

- **6 տարեկան և ավելի բարձր տարիքի ցանկացած անձ**, ով արդեն ստացել է թարմացված պատվաստանյութի մեկ դեղաչափ, համարվում է ժամանակին պատվաստված: Հետևյալ մարդիկ կարող են ստանալ լրացուցիչ դեղաչափեր.
  - **65 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները** կարող են ստանալ երկրորդ թարմացված դեղաչափը առաջին թարմացված դեղաչափին ընդունելուց առնվազն 4 ամիս հետո:
  - **Իմունային անբավարարություն ունեցող մարդիկ** կարող են ստանալ լրացուցիչ թարմացված դեղաչափ: Խոսքը ձեր բժշկի հետ այն մասին, թե որն է ձեզ համար ամենալավ ժամանակը:
- **Այն մարդիկ, ովքեր պատվաստված չեն**, պետք է ստանան թարմացված պատվաստանյութի մեկ դեղաչափ հիմա:
- **Այն մարդիկ, ովքեր պատվաստված են**, սակայն չեն ստացել թարմացված պատվաստանյութ, պետք է ստանան դրա մեկ դեղաչափը սկզբնական (միավալենտ) պատվաստանյութի վերջին դեղաչափին ընդունելուց առնվազն 2 ամիս հետո:
- **6 ամսականից 5 տարեկան երեխաներին** կարող են անհրաժեշտ լինել պատվաստանյութի մի քանի դեղաչափեր, ներառյալ՝ առնվազն մեկ թարմացված դեղաչափ: Դեղաչափերի քանակը կախված է նրանց տարիքից և նախկինում ստացած պատվաստանյութի տեսակից:
- Յուրաքանչյուր ոք պետք է պատվաստվի, նույնիսկ եթե նա հղի է, կրծքով կերակրում է կամ նախկինում վարակվել է COVID-19-ով:
- Հավելյալ տեղեկությունների համար այցելեք [cdc.gov/coronavirus/vaccine](https://www.cdc.gov/coronavirus/vaccine):



Նշուն: Novavax-ի միավալենտ պատվաստանյութը [որոշ դեպքերում](#) հասանելի է 12+ տարեկան մարդկանց համար և հասանելի է որպես խթանիչ 18+ տարեկան մարդկանց համար: J&J միավալենտ պատվաստանյութն այլևս հասանելի չէ Միացյալ Նահանգներում:





# COVID-19


## Փաստեր պատվաստման մասին

### ԻՆՉՊԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Լոս Անջելեսի Շրջանում կան պատվաստման հարյուրավոր վայրեր: Շատերը բաց են շաբաթ և կիրակի օրերին ու երեկոյան ժամերին և չեն պահանջում ժամադրություն:

Ձեր թաղամասում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք [ph.lacounty.gov/howtogetvaccinated](http://ph.lacounty.gov/howtogetvaccinated) կայքէջ կամ զանգահարեք **1-833-540-0473** հեռախոսահամարով:
- Չանգահարեք 2-1-1 կամ հարցրեք ձեր բժշկին կամ տեղային դեղագործին:



Գործում են անվճար փոխադրման և տանը պատվաստվելու ծառայություններ:

Անչափահասներին պատվաստման համար անհրաժեշտ է իրենց ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:

### ԼՈՒՐՋ ԿՈՂՄԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՉՎԱԴԵՊ ԵՆ

- Հայտնի կողմնակի ազդեցությունները ներառում են՝ ցավ, այտուց և կարմրություն պատվաստանյութի ներարկման հատվածում, մկանների կամ հոդերի ցավ, ավշային հանգույցների այտուցում, ջերմություն, դող, գլխացավ և հոգնածության զգացողություն: Փոքրիկ երեխաների մոտ կողմնակի ազդեցությունները ներառում են նաև լաց, հոգնածություն, քնկոտություն և փտորժակի կորուստ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն**: Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են պատահում:



### COVID-19-Ի ՂԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԱՆՎՏԱՆՁ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19 հարուցող վիրուս:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի տարբեր գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք **անվտանգ են և արդյունավետ**:
- Սկսած 2020 թվականի դեկտեմբերից՝ **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են ենթարկվել ԱՄՆ-ի պատմության մեջ **անվտանգության ամենաուժեղ հսկողությանը**:
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են վերարտադրողականության հետ կապված խնդիրներ: Պատվաստանյութերն անվտանգ են հղի անձանց համար և խորհուրդ են տրվում հղիության մասնագետների կողմից:

